ԵՊՀ ԻՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ /2024-2025ԹԹ./

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը մշտապես կարևորում է իրականացվող կրթական ծրագրերի շարունակական կատարելագործումը, ուսանողների մասնագիտական պատրաստվածության բարձրացումը և շրջանավարտների մրցունակության ապահովումը աշխատաշուկայում: Միևնույն ժամանակ, կարևորելով գործատուների հետ համագործակցությունը, մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն, բացահայտելու, թե ինչպես են արտաքին շահակիցները ընկալում ԵՊՀ ԻՄ շրջանավարտների պատրաստվածությունը, մասնագիտական կարողությունները, գործնական հմտությունները և համալսարանի կրթական ծրագրերի արդյունավետությունը:

Ուսումնասիրությունն իրականացվում է Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի կողմից առցանց (online) հարցման միջոցով: Հարցումն անանուն է, ընդգրկում է 15 հարց, որի միջոցով հարցվող ընտրահատվածը 5-բալային սանդղակով գնահատում և կարծիք է արտահայտում այն աշխատակիցների նկատմամբ, ովքեր համարվում են մասնաճյուղի վերջին հինգ տարվա շրջանավարտ:

2025թ հարցման ընտրահատվածում ներառվել են մարզի 130 գործատու կազմակերպությունների՝ ներառյալ բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: Նրանցից հարցմանը մասնակցել է 68-ը, որը կազմում է ընդհանուր ընտրահատվածի **52 30%-ը**:

Ստացված տվյալների մշակումն ու վերլուծությունը իրականացվել է նախորդ տարիների նույնատիպ հարցումների արդյունքների հետ համեմատական վերլուծության միջոցով, որը հնարավորություն է տալիս բացահայտել մասնակցության և գնահատման մտումները՝ վերջին հինգ տարիների ընթացքում:

Աղյուսակ 1

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը	**2021թ.**	**2022թ.**	**2023թ.**	**2024թ.**	**2025թ.**
	70	73	63	67	68

Գործատուները գնահատել են վերջին հինգ տարվա ընթացքում աշխատանքի ընդունված, ԵՊՀ ԻՄ շրջանավարտ հանդիսացող, **258 աշխատակցի** աշխատանքային արդյունքները, որոնցից 201-ը (**77.90%**-ը) աշխատում է իր մասնագիտությամբ: Այս տվյալները վկայում են, որ շրջանավարտների մասնագիտական կողմնորոշումը և պատրաստվածությունը մեծամասամբ համապատասխանում են աշխատաշուկայի պահանջներին:

Հարցման արդյունքներով ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը բարձր (**4 և 5)** են գնահատել 68 գործատուներից 61-ը (**89.70%**-ը), գործնական հմտությունները՝ 59 (**86.76%-**ը), մասնագիտական խոսքը՝ 58-ը (**85.29%-**ը):

Աղյուսակ 2

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Մասնագիտական պատրաստվածությունը	27	34	7	0	61	89.70%
2	Գործնական հմտությունները	23	36	9	0	59	86.76%
3	Մասնագիտական խոսքը	17	41	9	1	58	85.29%

Հարցման արդյունքներով մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության միջին գնահատականը կազմել է **4.29**, գործնական հմտություն-ները՝ **4.20**, մասնագիտական խոսքը՝ **4.08**:

Աղյուսակ 3

Թիվ	Շրջանավարտների	Միջին գնահատական				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1	Մասնագիտական պատրաստվածությունը	3.97	3.94	4.26	4.28	4.29
2	Գործնական հմտությունները	3.71	3.71	3.88	4.02	4.20
3	Մասնագիտական խոսքը	3.79	3.87	4.20	4.05	4.08

2021–2025 թթ տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՊՀ ԻՄ շրջանավարտների գնահատականները վերջին հինգ տարիների ընթացքում ունեն բարձրացման միտում: Առավել նկատելի է գործնական հմտությունների բարելավումը, իսկ մասնագիտական պատրաստվածությունը վերջն երեք տարիների համար ունի կայուն ցուցանիշ:

ԵՊՀ ԻՄ շրջանավարտների ինքնադրսևորման կարողությունները՝ մասնավորապես հաղորդակցվելու ունակությունները բարձր (**4 և 5)** են գնահատել 68 գործատուներից 66-ը (97.05%-ը), իսկ 61 գործատու (89.70%) բարձր է գնահատել շրջանավարտների կարողությունը՝ տարբեր գործնական իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու առումով: Այս արդյունքները վկայում են, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ ունեն կայացած հաղորդակցական և իրավիճակային կողմնորոշման հմտություններ, որոնք կարևոր դեր ունեն մասնագիտական գործունեության մեջ:

Աղյուսակ 4

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Հաղորդակցվելու կարողությունները	30	36	2	0	66	97.05%
2	Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	21	40	7	0	61	89.70%

Հարցման արդյունքներով մասնաճյուղի շրջանավարտների հաղորդակցվելու կարողությունների միջին գնահատականը կազմել է **4.41**, տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները՝ **4.20**:

Աղյուսակ 5

Թիվ	Շրջանավարտների.	Միջին գնահատական				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1	Հաղորդակցվելու կարողությունները	4.2	4.05	4.30	**4.32**	**4.41**
2	Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	3.76	3.84	4.01	**4.07**	**4.20**

2021–2025 թթ տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՊՀ ԻՄ շրջանավարտների գնահատականները վերջին հինգ տարիների ընթացքում ունեն աստիճանական աճ, մեր շրջանավարտները կարողանում են արդյունավետ շփվել և արագ կողմնորոշվել տարբեր իրավճակներում: Հավելենք, որ մասնաճյուղի կրթական գործընթացում ներդրված նոր մոտեցմամբ (ինքնուրույն և հետազոտական աշխատանքների իրականացմամբ) ակնկալվում է, որ 2026 թ-ից ԵՊՀ ԻՄ շրջանավարտները գործնական միջավայրում կդրսևորեն ավելի տեսանելի վերլուծական և հետազոտական կարողություններ:

Հարցման մասնակիցները գնահատել են նաև մեր շրջանավարտների ընդհանրական կարողությունները: 68 գործատուներից 64-ը (94.11%-ը) բարձր (4 և 5) է գնահատել մեր շրջանավարտների աշխատանքային կարգապահությունը, իսկ 65-ը (95.58%-ը)՝ թիմային աշխատանք կատարելու ունակությունը:

Աղյուսակ 6

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Աշխատանքային կարգապահությունը	41	23	3	1	64	94.11%
2	Թիմային աշխատանք կատարելու ունակությունները	38	27	1	2	65	95.58%

Հարցման արդյունքներով մասնաճյուղի շրջանավարտների աշխատանքային կարգապահության միջին գնահատականը կազմել է **4.52**, թիմային աշխատանք կատարելու ունակություններ՝ **4.48**:

Աղյուսակ 7

Թիվ	Շրջանավարտների.	Միջին գնահատական				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1	Աշխատանքային կարգապահությունը	4.20	4.13	4.47	**4.59**	**4.52**
2	Թիմային աշխատանք կատարելու ունակությունները	4.01	3.97	4.20	**4.40**	**4.48**

2021–2025թթ տվյալների համադրումը ցույց է տալիս, որ երկու ցուցանիշներն էլ ունեն ընդհանուր առմամբ կայուն աճի միտում: Աշխատանքային կարգապահությունը 2021 թվականից մինչև 2024 թվականը ունեցել է շարունակական բարձրացում՝ 4.20-ից հասնելով 4.59-ի, թեև 2025-ին փոքր անկում է նկատվում (4.52), ցուցանիշը մնում է բարձր և կայուն:

Գործատուները գնահատել են նաև ԵՊՀ ԻՄ շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները: 68 գործատուներից 62-ը (91.17%-ը) մեր շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները գնահատել են 4 և 5 գնահատականներով:

Աղյուսակ 8

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները	36	26	5	1	62	91.17%

Հարցումների արդյունքում շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունների միջին գնահատականը կազմել է **4.42**, որը նույնպես բարձր է նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ:

Աղյուսակ 9

Թիվ	Շրջանավարտների	Միջին գնահատական				
		2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.
1	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները	3.94	4.09	4.20	**4.20**	**4.42**

2025թ հարցման արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են և փաստում են, որ ԵՊՀ ԻՄ շրջանավարտները աչքի են ընկնում պատասխանատու վարքագծով, կարգապահությամբ և թիմային աշխատանքի պատրաստակամությամբ: Այս ընդհանրական կարողությունները, համակցվելով մասնագիտական հմտությունների հետ, ապահովում են շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում:

Մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ շահակիցների կարծիքի ուսումնասիրությունը կատարվել է նաև բաց հարցերի միջոցով: Մասնավորապես շահակիցներին առաջարկվել է նշել, թե որոնք են մեր շրջանավարտների ուժեղ և թույլ կողմերը և աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն է կարևորվում:

«Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ շրջանավարտների երեք ուժեղ կողմերը» հարցի համար ամենաշատ տրված պատասխաններն են՝

- մասնագիտական պատրաստվածությունը,
- կարգապահությունը և հաղորդակցման կարողությունը,
- ՏՀՏ ոլորտի իմացությունը:

«***Խնդրում ենք նշել ԵՊՀ ԻՄ շրջանավարտների երեք թույլ կողմերը»*** հարցին շահակիցների 40% -ը չուներ որևէ գրառում, իսկ պատասխանողների մեջ մեծ մասը նշել է՝

- փորձի պակասը,

- ինքնավստահության և առաջնորդական հմտությունների պակասը,
- համայնքում նախաձեռնություններով հանդես գալը:

«***Աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն եք կարևորում»*** հարցին գործատուների մեծ մասը պատասխանել է, որ աշխատանքի ընդունման գործընթացում կարևորում է թեկնածուի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, մասնագիտական խոսքը, պատասխանատվությունը և կարգապահությունը, հաղորդակցվելու հմտությունները, թիմում աշխատելու ունակությունները: Սա նշանակում է, որ գործատուները մեծ կարևորություն են տալիս բարձրագույն կրթությանը, մասնագիտական պատրաստվածությանը և գործնական փորձին՝ ակնկալելով որակյալ և մրցունակ շրջանավարտներ: Նշված նախապատվությունները դրական ազդեցություն ունեն նաև մասնաճյուղի նկատմամբ վստահության ձևավորման վրա, քանի որ որակյալ կադրերի պահանջարկը և շրջանավարտների բարձր գնահատված կարողությունները նպաստում են մասնաճյուղի հեղինակության ամրապնդմանը:

Հարցմանը ընթացքում ուսումնասիրվել է նաև մասնաճյուղի հեղինակությունը կազմակերպությունում և բնակավայրում: Մասնակից 68 գործատուներից 66-ը (97.05%-ը) մասնաճյուղի հեղինակությունը բարձր (4 և 5) են գնահատել իրենց կազմակերպությունում, իսկ 67-ը (98.52%-ը)՝ իրենց բնակավայրում: Հարցման արդյունքում մասնաճյուղի հեղինակության միջին գնահատականը կազմակերպությունում կազմել է 4.61, իսկ բնակավայրում՝ 4.58:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է պատասխանել հարցման մասնակիցներից 67-ը

(98.52%-ը)։ Այս ցուցանիշը բավականին բարձր է, այսինքն տարածաշրջանում բարձր է կարծիքը մասնաճյուղի կրթական գործունեության մասին։

Այս հեղինակությունը ձևավորել է և՛ մասնաճյուղը՝ իր տասնյակ տարիների կրթական գործունեությամբ, և՛ շրջանավարտները՝ հասարակական և տնտեսական գործունեության մեջ ակտիվ ներգրավվածությամբ։

Հարցման ընթացքում հավաքագրվել են տվյալներ, թե ի՞նչ է առաջարկում աշխատաշուկան, որոնք են մարզում պահանջարկ ունեցող մասնագիտությունները՝ նպատակ ունենալով օգնել մասնաճյուղին մշակելու նոր կրթական ծրագրեր, որոնք համահունչ կլինեն համայնքի կարիքներին։

Առաջարկվող մասնագիտությունները թեև նախորդ տարիների ուսումնասիրության արդյունքներից էականորեն չեն տարբերվում, բայց որոշ մասնագիտությունների համար ունեն պահանջարկի աճ։

Աղյուսակ 10

N	ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՆԱԿ				
		2021 թ.	2022 թ.	2023 թ.	2024թ.	2025թ.
1.	Մարդկային ռեսուրսների կառավարում		**1**	**3**	**1**	**1**
2.	Մարքեթինգ, բիզնես ոլորտ	**1**	**4**	**4**	**1**	**1**
3.	Կենսաբանության ուսուցիչ	**2**	**9**	**6**	**12**	**14**
4.	Աշխարհագրության ուսուցիչ	**2**	**6**	**2**	**3**	**4**
5.	Քիմիայի ուսուցիչ	**7**	**10**	**6**	**14**	**11**
6.	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	**2**	**2**	**2**	**3**	**6**
7.	Իրավաբանություն, իրավագիտություն, իրավունքի տեսություն	**7**	**8**	**6**	**1**	**3**
8.	Սոցիոլոգիա		**2**	**3**	**1**	**2**
9.	Տվյալագիտություն,data science, վիճակագրություն			**4**	**2**	**2**
10.	Բնագիտության ուսուցիչ		**1**	**3**	**5**	**6**
11.	Մաթեմատիկայի ուսուցիչ			**4**	**11**	**13**

Նշվածներից երևում է, որ աշխատաշուկայում աճում է ուսուցիչների պահանջը՝ հատկապես բնագիտական առարկաներից (քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա)։ Այս առումով 2020թ-ից մասնաճյուղը հեռակա ուսուցմամբ առաջարկում է մագիստրոսական «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրը և

այդ մասին պարբերաբար հասարակությանն իրազեկում պաշտոնական կայքէջի և հանրակրթական դպրոցներում կազմակերպվող հանդիպումների միջոցով։

Ելնելով հարցման արդյունքներից՝ շրջանավարտների ուսուցումը բարելավելու համար ՊԿՇՀ բաժնի կողմից առաջարկվում է՝

գործնական ուսուցում - շրջանավարտների գործնական փորձի ընդլայնման նպատակով գործնական պարապմունքների, պրակտիկայի և տարբեր նախագծերի մասնակցության ավելացում,

փափուկ հմտությունների զարգացում - շրջանավարտների փափուկ հմտությունների զարգացման վրա կատարել շեշտադրումներ, ինչպիսիք են արդյունավետ հաղորդակցման, ներկայացման և տարբեր լսարանների առջև հանդես գալու հմտությունները,

համագործակցություն գործատուների հետ - ունենալ կանոնավոր երկխոսություն ընկերությունների հետ՝ ընկերություններում գործող ծրագրերում ուսանողներին ընդգրկելու, ինչպես նաև շրջանավարտների վերաբերյալ կարծիքի ուսումնասիրություններում ավելի լայն շրջանակ ունենալու համար։

ՊԿՇՀ բաժինը հարցման արդյունքները կտրամադրի մասնագիտական ամբիոններին և ուսանողներին (ՈՒԳԸ և ՈՒԽ)՝ քննության առարկա դարձնելու կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների կարծիք-գնահատականներն ու առաջարկությունները։

Ուսումնասիրության արդյունքները կօգնեն մշակել նոր կրթական ծրագրեր և մարտավարություններ՝ բարելավելու շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը և ապահովելու կրթությունից աշխատանք սահուն անցումը։

Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժին